

այս աղմուկը և զիտեն թէ իրենց վախի բոլոր արտայայտութիւնքը զիրենք չպիտի փրկէին կայծակի վտանգէն: Ինչ կապ ուրեմն կրնար ունենալ այս որոտը այն սոսկալի աղմուկին հետ, որ կը զգան յանկարծ, ու առաջին անգամ իրենց կեանքին մէջ, մեղունքն ու մըջիւնները:

Բայց եթէ մեղունքը խուլ են մեզ շատ ուժեղ կերպով զգալի ձայներու համար, այս չի նշանակեր թէ անոնք նոյն պէս են նաեւ շատ քնքուշ ձայներու նկատմամբ, յատկապէս անոնց, զորս իրենք չ'արտադրեն, և որոնց մի քանին զգալի են նաեւ մեր ականջներուն: Ինչպէս օրինակ մեղուաբուծներու կոչած «մուշման վիճակը» որու մէջ կը գտնուին մեղունքը փեթակը ծխած առտեն, տակաւին քիչներու մէջ փակուած երիտասարդ թագուհւոյ «երգը» և այլն, ահա այս բոլորը իրողութիւններ են յագուտ մեղունքու մօտ լսողութեան զգայաւանի գոյութեան կարծիքին:

Գալով մըջիւններուն, անոնք մեզ լսելի և ոչ մի ձայն չեն հաներ. բայց մի թէ այս ըսել կ'ուզէ թէ բացարձակապէս ձայն չեն հաներ. խուլ են անոնք թէ՛ ոչ: Այդ մասին ոչ ինչ չէ կարելի ըսել. յամենայն դէպս դեռ մինչև այժմ միջատաբանները համակարծիք չեն անոնց՝ հնչուն թրթռուածները զգալի դարձնող գործարանի որպիսութեան վրայ:

Եթէ իրօք մեղունքու և մըջիւններու մօտ գոյութիւն ունի զգայարան մը զոր կարելի ըլլար համեմատել մեր լսողութեան, այս զգայարանը կը գործէ այնպիսի ձևով, զոր բնաւ կարելի պիտի չըլլար նմանեցնել մեր լսողութեան գործարանին հետ:

#### ՇԱՊՈՒՅՑ ՓԻՆՈՍԵԱՆ

Բժշկութեան ուսանող Ժոննէի համալսարանի:

Շարայարելի



## ՍԱՐԳԻՍ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Լուրջ դէմքով, թափանցիկ նայուածքով, համակրելի պատանեակ մ'երեւցաւ ինձ՝ բնիկ Մալաթիացի Սարգիսն, երբ առաջին անգամ տեսայ զինքը 1903ին կարին՝ Սանասարեան վարժարանի այցելութեան գնացած պահուս, ուր վեցերորդ տարուան շրջանն աւարտելու վրայ էր: Աշակերտաց հանգստեան ժամանակն էր, և մինչդեռ ուրիշ ուսանողներ մարմնամարզ խաղերով կը զբօսնուէին՝ ապագայ նկարիչը եռոտանոյ մ'առջեւն անցած՝ իւր տարրական վրձինով կը զուարճանար. և թէ չեմ սխալիր՝ իրականէն առնուած փոքրիկ բնակար մ'էր, որուն վերջին շուրջը կու տար իւր վրձինով, նկարչիկին հետ նկարիկին բնականութիւնն ու գոյնեւրոն ներդաշնակութիւնն՝ քանի մը վայրկեան ուշադրութիւնս զրաւեցին, և երբ հեռացանք անկից՝ ուրախակցութիւնս յայտնեցի Պր. Գ. Արուկեանցի՝ վարժարանի Ուսուցչապետ վարիչներէն միոյն, որ ազնուութեամբ ինձ կ'առաջնորդէր, և հարցուցի թէ ո՞վ էր վարժարանին նկարչու թեան ուսուցիչը, որ այդքան լաւ առաջնորդութիւն ըրած էր փոքրիկ Սարգիսին սկզբնական քայլերուն: — Ուսուցչապետը ժպտը երեսին՝ հասկըցուց ինձ որ նկարչութեան ուսուցիչ մը՝ Սանասարեան վարժարանի համար դեռ եւս փափաքելի չուայլութիւն մը կրնար համարուիլ, և թէ փոքրիկ Սարգիսն ինքնաբերաբար և ինքնառաջնորդ՝ իրեն բնական բերման կը հետեւէր, և թէ՛ ո՛րքան բախտաւոր պիտի ըլլար՝ թէ որ վենետկոյ Մուրատ — Ռափայէլեան վարժարանի փոխադրուելով՝ գեղարուեստից այնպիսի կեդրոնավայրի մէջ և քաջ նկարչի մ'առաջնորդութեան ներքեւ՝ կարենար իւր սիրած արուեստին օրինաւոր ընթացքը կատարել:

Տարի մը վերջը վենետիկ կը գտնուէի, երբ պատանին ստէպ ստէպ թախանձական եռանդուն նամակներով դիմումներ կ'ընէր

վերոյիշեալ առաջարկութեան իրագործումը ձեռք բերելու համար, սակայն անհնարին եղաւ իւր այդ բարի փափաքը կատարել, քանի որ տրամադրելի ազատ ձրի թողակներ (պոստեր) չունէր այդ ժամանակ Մուրատ-Թափայէեան վարժարանը՝ զինքը գոհացնել կարենալու համար Պաքազայ մը՝ որ քանի քանի հայ պատանիներու կենդանի իղձերը՝ սրտերնուն մէջ մնոցնելու դատապարտեր է՝ գիրենք լրջման ենթարկելով, երբ կը պակսին անոնց զբաղական միջոցները՝ իրենց զաղափարականին հասնելու համար:

Բայց փոքրիկ Սարգիսը՝ մեծ կամքի տէր էր. լքմանէ ընկճուելու համար ծնած չէր: Տարի մ'ամբողջ զուր վատնուեցաւ՝ դիմումներ ընելով աւելի կամ պակաս յուսացուցիչ հարուստներու քսակներուն, որով կարելի ըլլար բարեգութ խնամակալ մը գտնելու, ապագայ նկարչին համար առատածոռն մեկնեսաւ մը, որքին համար սրտի հայր մը: Բայց որքան ցանցաւ են հայ պատանւոյն համար այդպիսի բախտաւորութիւնը, «Ես վարժարանս աւարտեցի, կը գրէր, և ինձ բուռեցան՝ որ իրր սան Սանասարեանի՝ Երոպայ պիտի դըրկուիմ. ուստի հարկենք (Մալաթիա) մեկնեցայ՝ ծօրս կարօտն առնելու, և հոն կըրցայ Խարբերդի Կոստակալէն Կ. Պոլսոյ համար անցագիր առնել (որքան դժուարին գործ՝ նախկին սեփմի ժամանակ), և հազար ու մէկ զեղեցիկ յոյսերով կրկին կարին մեկնեցայ, սակայն դժբախտաբար Սանասարեանի երբեակ Տեսութիւնն չեմ գտնիր ինչո՞ւ՝ զիս յուսահատ մինչեւ գաւառներու խորը նեւեցին . . . »: Սակայն հաստատամիտ պատանին Անթապի և Հալէպի մէջ ալ « առանց երբեք յուսահատելու » սկսաւ աշխատիլ և « բաւական համբաւ ու դրամ շահիլ »: Այս ժամանակն էր՝ որ արդէն Ազատութիւնն հռչակուած էր Տանկաստանի մէջ, ուստի Սարգիս Կ. Պոլսի գալով՝ ներկայացաւ Նորին Վսեմութեան Գարբիէէ թէ. Նորատունկեանի, որուն բարձր պաշտպանութեան հետեւանքով՝ 1908ին Հոգով ուղարկուեցաւ՝ այն.

տեղի Գեղարուեստից Ակադեմիային աշակերտելու. բայց խաւերէն լեզուին անծանօթ ըլլալով՝ նախ ստիպուեցաւ նոյն լեզուն սովորելու աշխատիլ: « Պէտք է խոստովանիմ, կը գրէր, որ Հոգովայ մէջ բրօֆ. Լիւոն թէ. Կիրեղեանը մի ահագին դեր է կատարել իմ առաջին քայլերուս, որը ճանչցած եմ շնորհիւ Նալ. Սինաս Վ. Նուրիխանի. և ես այդ առաջին տարիսի մէջ այնքան յառաջ գնացի՝ որ երբ Ակադեմիա մտայ՝ արդէն երրորդ կարգն ընդունուեցայ, և կրկին ըննութիւններով յաջողեցայ ամբողջ հինգ տարուան շրջանը մէկ տարին աւարտել և Ակադեմիի վկայականին արժանացայ »:

Սակայն վերջնութեւ տարւոյն մեծ-արձակուրդի ատեն՝ Պր. Սարգիս Խաչատուրեան եկած էր Վենետիկ մէջ անցընելու այդ ժամանակամիջոցը, հետամուտ ըլլալով ուսումնասիրելու Վենետիկեան-Գեղարուեստի յատկութիւնները: Քաղաքիս Ս. Խաչ. Հայոց եկեղեցւոյն սեփական հիւրանոցի համեստ սենեակներէն մին վարձելով՝ քանի մ'ամիսներ Վենետիկ մնաց. և ես՝ իրը Հոգաբարձու վերոյիշեալ եկեղեցւոյն՝ ստիժ ունէի ստեղծ այցելել իրեն, գտնելով միշտ զինքը շրջապատեալ զանազան նկարներէ, որոնք արուեստին սիրահարի մ'եռանդով ցոյց կու տար ինձ, և կը բացատրէր իւր մտքին մէջ ունեցած ապագայ ընելիք աշխատութիւններէն մէկ քանին: Կը խոստովանիմ որ լաւ ըմբռնող մը չեմ պատկերահանութեան արուեստի ներքին թեանց, բայց շատ ախորժելով մտիկ կըլնէի ոգեւորեալ երիտասարդին բացատրութիւնները, և մէկ կողմանէ ալ մտքէս կը խորհրդածէի՝ ըսելով ինքիւրենս. Քիչ տեսեր եմ այսքան եռանդով իւր մասնաճիւղին ինքզինքը նուիրած երիտասարդ մը. ահա Վենետիկի՝ այս մոգական քաղաքին՝ զուարճութեանց եղանակն է. աշխարհումէն կարծես հոս կը դիմեն վայելքի հրապոյրով, իսկ այս երիտասարդն՝ հակառակ իւր տարիքի բերանցի՝ գրեթէ անտարբեր՝ հանդէպ զինքը շրջապատող զբօսանքներու, իւր սենեկին, իւր պատկեր.

ներուն ընկերակցութեան մէջ կը գտնէ իւր գուարճութիւնն և արտի զոհութիւնը:

Հոովմի Ակադեմիոյ վկայականն ընդունելէ յետոյ՝ վերջին ամիսներս Պր. Ս. Խաչատուրեան գնաց Նախ Զուիցերի և յետոյ անցաւ Գերմանիա, և Միւնխէնէ կը զբերէին. «Ինչպէս գիտէք, յարգելի վարդապետս, Պատ. Խնամակալութեան հրամանաւ Զուիցերիայէն անցայ Գերմանիա, որպէս զի զարգացումս միակողմանի չլինի. և այժմ հոս Միւնխէնի մէջ կ'ուսումնասիրեմ գերման միջակարգ վարժարաններու մէջ գործնական մեթոտներն՝ նկարչութիւնը ու գծագրութիւնը ուսուցանելու, որպէս զի երբ կարին վերադառնամ՝ կարենամ լաւ կերպով սովորեցնել և աւանդել, վասն զի այս ամառը կարին պիտի վերադառնամ՝ շրջանս լրացած լինելով»:

Ահաւաստիկ երիտասարդ մը՝ որ այդ հասակին թանկագին օրերը վատնած ըլլալու խղճէն ազատ է, և որ այս սողերս գրած պահուստ՝ արդէն ճամբայ ինկած է դէպ ի կարին, և կրնանք սրտանց մագթել իրեն՝ որ շահաւէտ ըլլան իւր ընելիք օգուտները հայ գեղարուեստին, և հայ ազգս կարենայ օր մը իւր պարծանքներն համրած ժամանակ՝ թիւ մ'ալ աւելցընել մինչեւ օրս ունեցած շարքին վրայ:

Երիտասարդ հայ նկարիչս՝ դեռ եւս առաջին քայլերուն մէջ՝ ունի սակայն արդէն շարք մը պատուաբեր աշխատութեանց, որոնք ոչ միայն Խաչիոյ, այլ Նաև Գերմանիոյ մէջ ալ մասնագէտներու գովեստից արժանացած են: Բազմալի զիս մէջ կը ներկայացընենք անոնցմէ երկու հատը՝ իրրեւ նմոշ մը իւր ոճին, չմոռնալով աւելցընելու որ տպագրութիւն մը՝ գոյնեղ և մանաւանդ կիսագոյններէ զուրկ՝ միշտ ազաւաղ կմախք մը միայն կրնայ ներկայացընել իսկականին, որքան ալ խնամքով եղած ըլլայ տպագրութիւնը: Ուրիշ առիթի կամ մասնագէտ գրչի թողով Պր. Ս. Խաչատուրեանի նկարներուն վրայ խորհրդածութիւններ ընելու գործը, ես միայն համրել կ'ուզեմ կարճ ժամանակի մէջ մինչեւ օրս ըրած իւր աշխատութիւնները:

1. Մարտ 31ի յեղափոխութեան արդիւնքը, «որուն մէջ երկինքն այլաբանական նկարուած է. կիներ՝ որոնք ծիարշաւ կ'ընթանան Ազատութեան—բանակին հետ, այն արեւելցի կիներն՝ որ մարդու աչքին երեւնալէ իւրս տուած է, բայց բանապետութեան ժամանակ իր ունեցած ցաւերն յիշելով՝ ինքն ալ կ'ուզէ այժմ մասնակցիլ ազատութեան պայքարին: Նկարին կեղծունը կը կազմեն երկու ծիարներն՝ էնչէր և Նիազի պէյերն, հոն է Շէֆքէթ փաշան. մէկ կողմը Նոր-Թիւրքիան, իսկ վարը Համիտ՝ շրջապատուած հպատակ ազգերու բռունցներէն».

2. Նարդիւն Ա. Ս. Հեղինէի մէջ (ծովանկար).

3. Հոովմի՝ Վիրա Պոթիկէ և Փիպցա Սիկես.

4. Պարտիզիկ յիւր.

5. Թիֆլիսի տեսարան մը.

6. Կոյսերուն մնաս քաղովրդ անտառի հարսին.

7. Կոյսերուն էթիւտը.

8. Պարտիզիկ.

9. Իրիկոսան թշիւ սեղան մը եւրոպական կեանքի մէջ.

10. Կնոյ մը պիւստը.

11. Արաք աղետակուն մը (ժրաներկ).

12. Որբի մը գրոյիւր.

13. Վրեժը.

14. Օձիկ սեղան.

15. Տեսարան մը հարէմի կեանքէն.

16. Վեներտիկոսին.

17. Համիտի կեանքը կամ Հիւն սեղանը.

18. Իմ յուսանկարս, զոր կը ներկայացընենք Հանդիսիս այս էջերուն մէջ, ուր կը տեսնուի Նկարիչը՝ 1895ին արիւնոտ դէպքերէն ազատուած, ըովը Մահ և Կոյս մեն իրենս — Այս յիշածներէս զուրս կը մնան ընդօրինակութիւններ մեծամեծ հեղինակներու գործերուն և բազմաթիւ ուսումնագծեր (études):

Օր մը՝ Պր. Սարգիս Խաչատուրեանի հուլիսաւոր գոյս—գործոյնները համրել կարենալու փափաքով և յոյսով կը կնքեմ ներկայ սողերս:

Հ. Ա. Վ. ՏԻՐՈՅԵԱՆ





ՄԱՀ ԵՒ ԿՈՒՆ ԵՒ ԻՆՔՍ

